

## Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ԵՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մայիսի 9-ին, Էջմիածնի շրջանի Դաշտ գյուղում:

1972—80 թթ. սովորել է տեղի ութամյա դպրոցում, իսկ 1980—82 թթ. ավարտել է Էջմիածնի շրջանի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցը:

1982—83 ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է հոգևոր ճեմարանում:

1989 թ. մայիսի 7-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1989 թ. ավարտելով հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը, աշխատանքի է նշանակվել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում, իսկ այնուհետև՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

Քառասունքն անցկացնելուց հետո, իր քահանայական ծառայությունը կշարունակի նույն եկեղեցում: